Հաստատում եմ՝ Digitally signed by GASPARYAN GOHAR 5603670071

Հաստատված է 30.08.2023թ.-ի թիվ1
Մանկավարժական խորհրդի նիստով

Դպրոցի տնօրեն ՝ Գ. Գասպարյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Արմավիրի մարզի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան N 5 հիմն. դպրոց

3-րդ դասարան

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը՝ Հովհաննիսյան Անի

« 2023- 2024 » ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1	**Ներածություն /դասարանի ընդհանուր բնութագիրը/**
	3-րդ դասարանը 2022-2023 ուստարում ունի 34 աշակերտ,տղա՝ 17,աղջիկ՝ 17
2	**Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում**
	2022-2023 ուստարում նախատեսվում են հետևյալ ուսումնադաստիարակչական աշխատանքները 1.Ուշադրություն դարձնել հաճախելիությանը և ուսումնական պրոցեսին: 2.Հետևել կարգապահությանը դասասենյակում,դասապրոցեսին և դասամիջոցին: 3.Աշխատել ծնողների հետ՝ծնողկոմիտեի միջոցով: 4.Տարվեն աշխատանքներ դասարանում միասնականության բարձրացման համար : 5.Մեծ ուշադրություն դարձնել աշակերտների առաջադիմության բարձրացմանը 6.Աշակերտների մեջ արթնացնել և արթուն պահել հայրենասիրական ոգին:

3	**Հոգևոր դաստիարակություն**
	Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը Ազգի պահպանման հիմքը հոգևոր դաստիարակությունն է: Օգնել ճիշտ գնահատել հոգևոր արժեքները: Օգտագործելով հայ եկեղեցու պատմությունը՝ որպես օրինակ,ցույց տալ,որ հոգևոր,նյութական արժեքները արժեզրկվում են հոգևոր ,նյութական արժեքները արժեզրկվում են հոգևոր բացակայությունից: Հեռու պահել աղանդավորներից:
4	**Գեղագիտական դաստիարակություն**
	Մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում: Երիտասարդության տարիներին գեղեցիկը տեսնելը և օբյեկտիվ գնահատելը ավելի անհրաժեշտ է դառնում:Պետք է հնարավորին չափ ծանոթ լինել արվեստի տարբեր ճյուղերին:Հաճախակի այցելել թանգարաններ,տեսարժան վայրեր,ցուցահանդեսներ:
5	**Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն**
	Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ֆիդայիների և հայ ազատամարտիկների նկատմամբ: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ: Ազգի դարավոր պատմության մասին զրույցներով բարձրացնել ռազմա-հայրենասիրական ոգին:Անցկացնել զրույցներ աղջիկների հետ ,,Մենք ինչ կարող ենք անել հայրենիքը պաշտպանելու համար ,, թեմայով:
6	**Ֆիզիկական դաստիարակություն**
	Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում :Հետևել ֆիզկուլտուրայի դասերին պատշաճ ներկայանալուն՝ ,,Առողջ մարմնում առողջ հոգի,,: Կազմակերպել միջդպրոցական ,միջգյուղական և միջտարածքային մրցույթներ և սպորտլանդիաներ:Ուսուցչի կարևոր խնդիրն է հետաքրքրություն առաջացնել սպորտի նկատմամբ:

7	**Աշխատանքային դաստիարակություն**
	Հետևել բոլորի մասնակցությանը կազմակերպվող յուրաքանչյուր շաբաթօրյակին: Հետևել դասարանի մաքրությանը:Պահպանել գույքը, ակտիվ մասնակցել դպրոցին վերաբերվող բոլոր աշխատանքներին: Աշխատանքը համարել երեխայի կարևոր պահանջմունքներից մեկը: Խթանել աշխատանքային հմտությունները և կառուցողական վերաբերմունքը:
8	**Բնապահպանական դաստիարակություն**
	Առողջ ապրելակերպի առաջին նախապայմանը բնությունն է:Անցկացնել զրույցներ բնապահպանական թեմաներով:Գարնանը ակտիվորեն մասնակցել ծառատնկման աշխատանքներին:Մաքուր պահել շրջակա բնությունը:
9	**Դպրոց-ընթանիք կապը**
	Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն: Ծնող-դպրոց-դասղեկ համագործակցությունը ծնողի տեղեկացվածության գրավականն է:Ծնողներին ընդգրկել յուրաքանչյուր արտադպրոցական միջոցառումներին:Ամիսը մեկ անցկացնել ծնողական ժողովներ,ավելի հաճախ ծնող խորհրդի նիստեր:Օգտագործել և 'ծրագիրը,և ' համակարգիչը ծնող-դպրոց կապը ամրապնդելու համար:
10	**Իրավական դաստիարակություն**
	Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ	Կատարվել է
I	Ողջույն դպրոց		
II	<<Ամառային ճամբար>> Այս վարժության նպատակն է աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողականության գաղափարը		
III	<<Քանի լեզու գիտես այնքան մարդ ես >> Ձևավորել բազմակարծություն և լսելու ընդունակություն		
IV	<<Եթե ես լինեի>> Նպատակնէ վերհանել աշակերտների կարողությունները և հմտությունները		
V	Կարողությունների հստակեցում և թերթիկի միջոցով հստակեցնել, թե աշակերտները ինչպիսի կարողություններ, ընդունակություններ ունեն և վերհանել դրանց զարգացման եղանակները		
VI	<<Ես էլ քեզ նման եմ >> թեմայով զրույցը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ		
VII	<<Բնական պաշարներ>> թեմայով քննարկումը կձևավորի գիտելիքներ բնականպաշարների, արդյունաբերության տարբեր ոլորտների, արդյունագործության դրական և բացասական ազդեցության և բնապահպանական միջոցառումների իրականացման վերաբերյալ		
VIII	<<Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում>>թեմայով զրույց, ինչի նպատակն է զարգացնել աշակերտների մոտ իրավունքները և		

	պարտականությունները տարբերակելու վերաբերյալ գաղափար		
IX	Պետական խորհրդանիշեր» թեմայով զրույց: Նպատակն է աշակերտներին ներկայացնել հայի ծագման և ձևավորման բազմաչարչար և տպավորիչ ուղին		
X	<<Էկոլոգական Հիմնախնդիրներ>>: Աշակերտներին հանձնարարել հավաքել տեղեկություններ Հայաստանի Հանրապետության ավելի ուշագրավ էկոլոգիական խնդիրների մասին		
XI	Պոլիէթիլենը և շրջակա միջավայրը		
XII	Գնահատիր ինքդ քեզ - զրույցի նպատակն է արժևորել արժեհամակարգը, աշխարհայացքի յուրահատկությունը, ինչպես նաև կարողանալ կատարել ինքնավերլուծություն		
XIII	<<Գնահատվող մրցույթ>> թեման հանարավորություն կընձեռնի ճանաչել իրենց շրջապատող անձանաց և շտկել թյուրկարծիքները		
XIV	<<Բնական աղետներ>> Ներկայացնել բնականաղետների առաջացման պատճառները		
XV	<<Կարող եմ օգտակար լինել>> Թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել բարին և այլ դրական հատկանիշներ		
XVI	<<Ազգ և պետություն>> թեմայով բաց քննարկում և վերլուծություն		
XVII	<<Փոքրիկ պատմություններ անհատի և հասարակության խնդիրների մասին>> նպատակն է աշակերտներին տեղեկացնել, թե մարդկությունն ինչ ժամանակաշրջան է անցել		
XVIII	<<Ազգային ևմիջազգային տոներ>> նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները		
XIX	<<Եկեղեցին և ազգը>> քննարկման միջոցով աշակերտների մոտ կհիմնավորվի եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում		
XX	<<Լրատվամիջոցներ և կերպարներ>> թեմայի միջոցով լուսաբանել արդի ժամանակաշրջանում լրատվամիջոցների, համացանցի դերը և ազդեցությունը		
XXI	<<Բարեկամներ նթշնամիներ>> քննարկման միջոցով կներկայացվի հայ-ադրբեջանական խնդրի ծագման պատճառները և հետևանքները		

XXII	<<Ինչպես վարվել աղբի հետ>>		
XXIII	<<Սպառողների իրավունքներ>> ներկայացնել և ձևավորել իրենց իրավունքները և պարտականությունները՝որպես սպառողներ		
XXIV	<<Քաղաքացիական ինքնություն>> թեման թույլ կտա աշակերտներին գաղափար ունենալ, թեինչ է քաղաքացիական ինքնությունը, հասանալ, թե քաղաքացի լինելն ինչքանով է առնչվում իրենց հետ		
XXV	<<Ինչու է պետք ներառումը>> Աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողական վերաբերմունք՝հատուկ կարիգավոր մարդկանցնկատմամբ		
XXVI	<<Ապագայի ծառը>> խթանում է վերլուծելու պատճառահետևանքային կապերը դիտարկելու, դասակարգելու հմտությունները		
XXVII	<<Գնահատվող մրցույթ>> աշակերտները կզարգացնեն և կստուգեն իրենց գիտելիքները,		
XXVIII	<<Նախապաշարումների ոստյան>> ներկայացնել, թե ինչպես է զգում նախապաշարմունքի և կարծրատիպերի զոհ դարձած մարդը:		
XXIX	<<Պատասխանատու քաղաքացի>> աշակերտները այս թեմայի ուսումնասիրելուց հետո կիմանան, թեինչպիսին պետքէ լինի քաղաքացին		
XXX	<<Պետք է արդյոք խնայել>> Խթանելով աշակերտների ստեղծագործական մտածողությունը,		
XXXI	<<Հայոց Մեծ Եղեռն>> աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը:Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն		
XXXII	<<Ասացվածք >>աշակերտներին ծանոթացնել ժողովրդական բանահյուսության մի տեսակին՝ասացվածքին և նրանց մեջ զարգացնել բարոյական արժեքներ, մարդկանց նկատմամբ հարգանք և մարդասիրություն		
XXXIII	<<Ազգային զարթոնք>> ներկայացնել հայերի մասնակցությունը մի շարք մարտական գործողություններին:Նպատաակն է աշակերտների մոտ ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգ		
XXXIV	Էքսկուրսիայի կազմակերպման հետ կապված հարցերիքննարկում Զրույց <<Մեծ եմ ես արդեն>>		